

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի ընդունման

### ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագիծը պայմանավորված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի գործողության ոլորտների հստակեցման, ինչպես նաև օրենքի առանձին դրույթների միջև եղած անհամապատասխանությունները վերացնելու անհրաժեշտությամբ:

### ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 15-րդ կետերի համաձայն օրենքի գործողությունը տարածվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն աշխատակազմ է համարվում քաղաքային համայնքում՝ քաղաքապետարանի, իսկ գյուղական համայնքում՝ գյուղապետարանի աշխատակազմը:

Նկատի ունենալով, որ Երևանը համայնք է, հետևաբար կարելի է եզրակացնել, որ «տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմ» տերմինն իր մեջ ընդգրկում է նաև «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ»-ը: Միաժամանակ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով «տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմ» հասկացությունը բացակայում է:

2. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն, ինչպես նաև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ գործող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձինք քաղաքացիական կամ համայնքային ծառայողներ չեն համարվում, մինչդեռ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հանրային ծառայող է համարվում պետական և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող անձը՝ առանց բացառությունների:

3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է, որ պաշտոնների անվանացանկեր են նախատեսվում հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի, ինչպես նաև համայնքային ծառայության համար: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն համայնքային ծառայությունն ընդգրկվում է հանրային ծառայության մեջ, իսկ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով համայնքային ծառայությունն, ըստ էության, առանձնացվում է հանրային ծառայությունից:

4. Որոշակի անհամապատասխանություն գոյություն ունի նաև օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի և նույն օրենքի 24-րդ հոդվածի միջև:

Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առևտրային կազմակերպություններում **10 և ավելի տոկոս բաժնեմաս** ունենալու դեպքում հանրային ծառայողը պարտավոր է այն հանձնել հավատարմագրային կառավարման: Ստացվում է, որ հանրային ծառայողը կարող է ունենալ, օրինակ՝ 9 տոկոս բաժնեմաս և այն չհանձնել հավատարմագրային կառավարման:

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հանրային ծառայողը չի կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն ձեռնարկատիրական գործունեություն է համարվում առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն **ամբողջությամբ** հանձնվել է հավատարմագրային կառավարման:

Օրենքի վերը նշված դրույթների վերլուծությամբ կարելի է փաստել, որ հանրային ծառայողը հավատարմագրային կառավարման պետք է հանձնի ոչ թե 10 և ավելի տոկոս

բաժնեմասը, այլ ամբողջը, հակառակ դեպքում հանրային ծառայողը չի կատարի օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները:

Բացի վերը նշվածից, Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ գլխի համաձայն առևտրային ընկերությունների կանոնադրական կապիտալներում անձանց մասնակցությունն արտահայտվում է, որոշ դեպքերում բաժնեմաս ունենալով (օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում), որոշ դեպքերում բաժնետոմսեր ունենալով (բաց կամ փակ բաժնետիրական ընկերությունների դեպքում), որոշ դեպքերում փայ ունենալով (կոոպերատիվների դեպքում) և այլն, մինչդեռ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում և 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում խոսք է գնում միայն **բաժնեմասի** մասին:

#### ՏՎՅԱԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագիծը տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության փոփոխություն չի նախատեսում:

#### ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԲՆՈՒՅԹԸ

Ներկայացված օրենքի նախագծի նպատակը՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի գործողության մարմիններում, համայնքների մասով, հստակություն մտցնելն ու օրենքում առկա անհամապատասխանությունների վերացումն է:

Առաջարկվում է՝

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում օգտագործել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ «քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմ» տերմինը, որն իր մեջ ընդգրկում է ինչպես Երևանի, այնպես էլ ՀՀ մյուս քաղաքապետարանների ու գյուղապետարանների աշխատակազմերը: Նշվածի հետ կապված առաջարկվում է նաև ուժը կորցրած ճանաչել օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը.

- նախատեսել, որ հանրային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնող անձինք հանրային ծառայողներ չեն համարվում.

- օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով «համայնքային ծառայություն»-ը դիտարկել «հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակ» հասկացության ներքո.

- նախատեսել, որ առևտրային կազմակերպություններում **10 և ավելի փոկոս բաժնեմաս** ունենալու դեպքում հանրային ծառայողը պարտավոր է այն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման.

- հստակեցնել առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում հանրային ծառայողի հնարավոր մասնակցության ձևերը (բաժնեմաս, բաժնետոմս, փայ և այլն):

#### ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

Նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչության կողմից:

#### ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը՝ սույն հիմնավորմամբ ներկայացված խնդիրների բացակայությունն է.